

ԿԱՐԾԻՔ

Հրայշա Վաղարշակի Արգումանյանի՝

«Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային
անվտանգության տեսության զարգացման մեջ»

ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության վերաբերյալ

Մանրամասն կարդալով աշխատությունն ու գնահատելով կատարված ծավալուն
աշխատանքը՝ ի սկզբանե ստեղծվեց տպավորություն, որ այն քաղաքագիտական
տեսության տիրույթից դուրս է և մասամբ գտնվում է քաղաքականության
փիլիսոփայության (ֆիլософия политики), մասամբ՝ քաղաքական աստվածաբանության
(политическая теология), մասամբ՝ քաղաքական սոցիոլոգիայի (политическая социология)՝
սահմաններում:

Այսպես, ինչպես նշված է ատենախոսության վերնագրում, այնպես էլ սկսած
աշխատանքի ներածական մասից հեղինակը խոսում է անվտանգային քաղաքագիտության
պարադիգմաների (հայեցակարգային տեսությունների) փոփոխման ու զարգացման
մասին, որոնք, իր կարծիքով, ի վիճակի չեն բացարել և կանխատեսել վերջին
տասնամյակների քաղաքական իրողությունները. «Изменения затронули
мировоззренческие и смыслообразующие паттерны, лежащие в основе формирования, как
отдельной личности, так и таких институтов, как семья, государство, мировая политическая
система. Справедливость последнего вывода наглядно видна на примере процессов в среде
безопасности, когда **существующие парадигмы оказались не в состоянии предсказать**
происходящие на протяжении последних десятилетий сдвиги» (Սեղմագիր, էջ 3):

Մենք փորձեցինք պարզել, թե անվտանգային քաղաքագիտության ո՞ր
հայեցակարգային տեսությունների մասին է խոսքը: Ցավոք, աշխատանքում որևէ խոսք
չկա անվտանգային քաղաքագիտության ո՞չ ավանդական, ո՞չ էլ արդի տեսությունների ու
հայեցակարգերի մասին: Ամբողջ տեքստում չկա ոչինչ ո՞չ ռեալիզմի, ոչ նեռուալիզմի, ոչ
լիբերալիզմի (բացառությամբ Ծմիթի՝ էջ. 35, 68), ոչ ստրուկտուրալիզմի և ֆեմինիզմի, ոչ
կոնստրուկտիվիզմի մասին: Մինչդեռ, հենց այս տեսություններն են անվտանգային
քաղաքագիտության հիմնարար և արդի պարադիգմաները:

Սակայն դարձալ՝ որպես աշխատանքի օբյեկտ նշված է «ազգային անվտանգության
տեսությունը» (Սեղմագիր, էջ. 4), սակայն ազգային անվտանգության որևէ
քաղաքագիտական տեսություն աշխատանքում չկա: Նույնը վերաբերում է
հետազոտության առարկային. «вывзванный качественными изменениями среди
безопасности парадигмальный сдвиг, требующий пересмотра взаимоотношений между
концептами политического и религиозного и разработки новой парадигмы...» (էջ. 10).
Դարձալ, առաջարկելով վերանայել ազգային անվտանգության (քաղաքագիտական)
տեսությունը՝ հեղինակն ամենաքիչը պետք է զոնե անդրադառնար անվտանգային
քաղաքագիտության տեսական հիմքերին, մոտեցումներին, մինչդեռ, ինչպես նշեցինք՝

աշխատանքում չեն քննարկվում և անգամ չեն հիշատակվում անվտանգային քաղաքագիտության տեսությունները:

Հետաքրքրի է նկատել, որ անգամ քաղաքական ռեալիզմի փոխարեն հեղինակը ըննարկում է ռեալիզմի փիլիսոփայական մոտեցումները՝ «реализм здравого смысла» և «научный реализм»՝ հասկացություններ, որոնք գիտության փիլիսոփայության բնագավառից են և այդտեղ ունեն իրենց արժեքը, որին քաջ տիրապետում է նաև հեղինակը:

Ատենախոսության մեջ որևէ խոսք չի ասվում նաև ժամանակակից անվտանգային հիմնախնդիրները բնութագրող, բացատրող և կանխատեսող արդի այլ քաղաքագիտական տեսությունների՝ սեկուրիտիզացիայի տեսության (Բ. Բուզան և այլք), «փափուկ», «կոշտ» և «խելացի» ուժի հայեցակարգերի (Զ. Նայ), և այնի մասին: Ատենախոսության մեջ բացակայում են նաև անվտանգային քաղաքագիտության տեսության հայաստանյան ներկայացուցիչների մոտեցումներ, որոնք միանշանակ կնպաստեին ատենախոսության առարկայական տիրույթի հստակեցմանն ու փիլիսոփայությունից դեպի անվտանգային քաղաքագիտություն տեղաշարժին, այդ թվում <Ա. Քոթանցյանի աշխատությունները (տե՛ս, օրինակ՝ **Կոտանձյան, Г. С.** Границы согласия - конфликта: Цивилизационные проблемы теоретической и прикладной политологии. Рос. акад. управления, Фонд нац. и междунар. безопасности. - М.: Луч, 1992):

Տպավորությունը, թե հեղինակն արիենտականորեն է քերել իր ուսումնասիրությունը անվտանգային քաղաքագիտության տեսության տիրույթ, և որ այն գտնվում է փիլիսոփայության տիրույթում՝ էլ ավելի է հաստատվում, եթե դիտարկենք հեղինակի կողմից սահմանված հետազոտական խնդիրները, այդ թվում.

- **«исследуются концептуальные основания сложного мышления и философии сложности сквозь призму различных философских дисциплин и как предмет философской рефлексии социальных и политических процессов, что позволяет сформулировать понятийно-категориальный аппарат и принципы сложного мышления и философии сложности в качестве элементов новой парадигмы;**
- **применяются в рамках новой парадигмы основные принципы сложного мышления и философии сложности, а также ряд законов теории систем к анализу политических процессов, что позволяет обосновать возможность привлечения к рассмотрению сложных систем научно-теоретических моделей и научных результатов, полученных в рамках общей теории систем, а также исследований, проводимых в рамках других гуманитарных и естественнонаучных наук;**
- **применяются основные принципы и методы теории САС, проводится анализ динамики поведения сложных адаптивных систем к организационной теории, что позволяет обосновать применимость концептуальных оснований новой парадигмы и принципов сложного мышления, философии и науки сложности к анализу данной теории».**

Հեղինակի իրական՝ քաղաքականության փիլիսոփայության (ֆилософия политики) առարկայական տիրույթին համապատասխանող մոտեցումն ակնհայտորեն արտահայտվում է վերոնշյալ խնդիրների սահմանման մեջ տեղ գտած՝ **«философская рефлексия социальных и политических процессов»** արտահայտության մեջ ևս:

Մինչեւ, աշխատանքի վերնագրում և տեքստում նշելով «ազգային անվտանգության տեսություն»՝ հեղինակն ինքն է փորձել տանել իր հետազոտությունը անվտանգային քաղաքագիտության (политология безопасности) տիրույթ, որն ակնհայտորեն արհեստական բնույթ է կրում և փոյլ չի տալիս գնահատելու աշխատանքի փիլիսոփայական արժեքը:

Այս տպավորությունն էլ ավելի է հաստատվում, եթե դիտարկում ենք հեղինակի կողմից նշված՝ ատենախոսության տեսական հիմքերը. «**понятийно-категориальный аппарат и принципы политической теологии, сложного мышления, философии сложности, науки сложности, научно-теоретические модели системных наук**, а также методы теории САС и теории сетецентричных войн» (Սեղմագիր, էջ. 5). Համապատասխանաբար, ատենախոսության տեսական գլուխներից առաջինը նվիրված է քաղաքական աստվածաբանությանը, երկրորդը՝ փիլիսոփայական տեսություններին և մոտեցումներին: «արձյալ՝ տեսնում ենք, որ ատենախոսությունը՝ ներկայացված լինելով «քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ, իրականում կատարված է քաղաքական աստվածաբանության և քաղաքականության փիլիսոփայության տիրույթում:

Ինչ վերաբերում է քաղաքական աստվածաբանությանը (политическая теология), որը հեղինակի կողմից կիրառվող հիմնական տեսական մոտեցումներից է, ապա ինքը այդ տեսության հիմնադիր Կառլ Շմիթը այդ տեսությունը համարում է «իրավական հասկացությունների սոցիոլոգիա» (տե՛ս, օրինակ. Շմիտ Կ. Политическая теология. Четыре главы к учению о суверенитете; Շмидт Կ. О трех видах юридического мышления политика // Շմидт Կ. Государство: Право и политика / Пер. с нем. О.В. Кильдишова. М., 2013):

Փաստորեն՝ ատենախոսությունը, ներկայացված լինելով քաղաքան պատմության և տեսության բնագավառում, կատարված է այլ՝ քաղաքականության փիլիսոփայության և քաղաքական աստվածաբանության տիրույթներում:

Բացի այդ՝ ատենախոսության վերնագրի ու հետազոտության նպատակի ձևակերպումներում հիմնական տեղ զբաղեցնող «ազգային անվտանգության տեսությունը» աշխատանքում տեսական հիմքեր չունի. բացակայում են անվտանգային քաղաքագիտության և՝ ավանդական, և ժամանակակից տեսությունները, անգամ չկա դրանց մասին որևէ հիշատակում:

Այսպիսով՝ հաշվի առնելով աշխատանքում տեղ գտած, սակայն գիտության այլ բնագավառին վերաբերող գիտական արժեքավոր մոտեցումները, այնուամենայնիվ պետք է եղանակացնենք, որ դրանք համապատասխան չեն հայտարարված վերնագրին և անվտանգային քաղաքագիտության տեսության բնագավառին:

Բացի այդ՝ նկատվել է նաև հրատարակված աշխատությունների ցանկի՝ <<ԲՈԿ-ի պահանջներին չհավարաելու խնդիրը: Այսպես, որպես SCOPUS շտեմարաններում զրանցված՝ գիտական բարձր վարկանիշ ունեցող հրատարակումներ հեղինակը նշել է չորս հոդված (Սեղմագիր, էջ 25), որոնք տպագրվել են ՆԱՏՕ-ի <<ամագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի տարեկան գիտաժողովների աշխատանքային թեմատիկ խմբերի կողմից հրատարակվող նյութերի ժողովածումներում.

- Arzumanian H. V. "Armenian Armed Forces Transformation," in Harnessing Regional Stability in the South Caucasus: The Role and Prospects of Defence Institution Building in the Current Strategic Context, **Frederic Labarre, Ernst M. Felberbauer (Eds.)** **15th Workshop of the Study Group "Regional Stability in the South Caucasus,"** jointly with the Working Group "Security Sector Reform", National Defence Academy and Bureau for Security Policy at the Austrian Ministry of Defence in cooperation with **PfP Consortium of Defence Academies and Security Studies Institutes**, Vienna, 2017, pp. 113-124. (0.8 a. л.)
- Arzumanian H. V. "An Argument to Revised the Principles Governing the Nagorno-Karabakh Conflict Resolution," in Apprehending Shifts in Status over Time: The Quest for Strategic Patience in the South Caucasus, **Frederic Labarre, Ernst M. Felberbauer (Eds.)** **11th Workshop of the Study Group "Regional Stability in the South Caucasus,"** National Defence Academy and Bureau for Security Policy at the Austrian Ministry of Defence in cooperation with **PfP Consortium of Defence Academies and Security Studies Institutes**, Vienna, 2015, pp. 97-105. (0.8 a. л.)
- Arzumanian H. V. "The Implementation of Functional Models of Decentralized National Security System in the South Caucasus," in From Self-Defence to Regional Disarmament: Reducing Tensions and Stabilising the South Caucasus, **Frederic Labarre, Ernst M. Felberbauer (Eds.)** **9 th Workshop of the Study Group "Regional Stability in the South Caucasus,"** National Defence Academy and Bureau for Security Policy at the Austrian Ministry of Defence in cooperation with **PfP Consortium of Defence Academies and Security Studies Institutes**, Vienna, October 2014, pp. 65-70. (0.7 a. л.)
- Arzumanian H. V. "Armenian statehood and sovereignty games," in What Kind of Sovereignty? Examining Alternative Governance Models in the South Caucasus," **Frederic Labarre, Ernst M. Felberbauer (Eds.)** **8 th Workshop of the Study Group "Regional Stability in the South Caucasus,"** National Defence Academy and Bureau for Security Policy at the Austrian Ministry of Defence in cooperation with **PfP Consortium of Defence Academies and Security Studies Institutes**, Vienna, January 2014, pp. 133-148. (1.0 a. л.)

Արանք կարևոր տեղեկատվական բնույթ ունեցող ժողովածուներ են: Սակայն, ոչ ժողովածուն, ոչ էլ առանձին նյութեր չունեն գիտական հոդվածների համար անհրաժեշտ (առավելաս՝ Scopus և Web of Science կարգավիճակի համար պահանջվող) DOI ցուցիչը, չունեն նաև մեր գիտական տարածության մեջ պարտադիր բնույթ կրող՝ ISBN և ISSN համարանիշերը: Իհարկե՝ մասնագիտական խորհրդի խնդիրն էր՝ հստակորեն ստուգել տվյալ ժողովածուներում տպագրվող նյութերի՝ որպես SCOPUS գիտական կարգավիճակ ունեցող հոդվածների համապատասխանությունը, սակայն ինք ստուգելով՝ այդ ժողովածուները չեմ գտել SCOPUS շահմարաններում, և չունեմ որևէ բավարար հիմք՝ դրանք SCOPUS կամ Web of Science գործակից ունեցող աշխատությունների շարքին դասելու:

Այսպիսով, ամբազրելով, որ ներկայացված աշխատանքը պատրաստված է «քաղաքականության փիլիսոփայության» և «քաղաքական աստվածաբանության» տեսամեթոդաբանական տիրույթում հիմնականում փիլիսոփայական տեսությունների ու մոտեցումների կիրառմամբ, իր վերնագրի և բովանդակության միջև անհամապատասխանությամբ, իր տեսամեթոդաբանական հենրով և անվտանգային

քաղաքագիտության տեսությունների բացակայությամբ, չի տեղափորվում «քաղաքական պատմություն և տեսություն» տիրույթում: Որպես երկրորդական, սակայն ոչ պակաս կարևոր խնդիր՝ առկա է նաև ներկայացված հրատարակված աշխատությունների՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին չհամապատասխանելու հարցը: Ուստի ստիպված ենք եզրակացնենք, որ չնայած աշխատանքում տեղ գտած արժեքավոր մոտեցումների և եզրակացությունների՝ սույն ատենախոսությունը չի բավարարում ԻԳ.00.01. «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհման համար ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Արթուր Վահակիմիրի Աթանեսյան

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

07.07.20202 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր

Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Գիտական քարտուղար

պատմական գիտությունների թեմաներու ողջեւմնական

L.U. Հովսեփյան

